

ISSN 0366-5119

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
NATIONAL ACADEMY OF SCIENCES OF THE REPUBLIC OF ARMENIA

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ
БИОЛОГИЧЕСКИЙ ЖУРНАЛ АРМЕНИИ
BIOLOGICAL JOURNAL OF ARMENIA

ՀԱՏՈՐ LXXIII, 2, 2021



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК РЕСПУБЛИКИ АРМЕНИИ
NATIONAL ACADEMY OF SCIENCES OF THE REPUBLIC OF ARMENIA

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՆՐԵՍ
БИОЛОГИЧЕСКИЙ ЖУРНАЛ АРМЕНИИ
BIOLOGICAL JOURNAL OF ARMENIA

ԴԱՏՈՐ LXXIII, 2, 2021

ԴՅ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն

Լույս է տեսնում 1948 թվականից, հոդվածները հրատարակվում են հայերեն,
ռուսերեն կամ անգլերեն լեզուներով
Выходит с 1948 года, статьи публикуются на армянском, русском
или английском языках
Journal is published since 1948, the articles are published in Armenian,
Russian or English

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿՈԼԵԳԻԱ

Է.Ս. Գևորգյան (*գլխավոր խմբագիր*), Ռ.Մ. Զարուբյունյան (*գլխավոր խմբագրի տեղակալ*), Ա.Յ. Եսայան (*պատասխանատու քարտուղար*), Գ.Գ. Գևորգյան, Լ.Ռ. Մանվելյան, Ս.Խ. Մայրապետյան, Ժ.Հ. Վարդանյան

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Յու.Թ. Ալեքսանյան, Ժ.Ի. Հակոբյան, Վ.Պ. Հակոբյան,
Ս.Հ. Մովսիսյան, Լ.Լ. Օսիպյան

РЕДАКЦИОННАЯ КОЛЛЕГИЯ

Յ.Ս. Գևորգյան (*главный редактор*), Ռ.Մ. Արությունյան (*заместитель главного редактора*), Ա.Գ. Եսայան (*ответственный секретарь*), Գ. Գ. Գևորգյան, Լ.Ր. Մանվելյան, Ս.Խ. Ма́йрапетян, Ж.А. Варданян

РЕДАКЦИОННЫЙ СОВЕТ

Ю.Т. Алексанян, Ж.И. Акобян, В.П. Акобян,
С.О. Мовсесян, Л.Л. Осипян

THE EDITORIAL BOARD

Editor in chief: E.S. Gevorgyan, *Vice-editor:* R.M. Aroutiunian,
Secretary-in-charge: A.H. Yesayan, *Members of the Board:* G.G. Gevorgyan,
L.R. Manvelyan, S.Kh. Mayrapetyan, Zh.H. Vardanyan.

THE EDITORIAL COUNCIL

Yu.T. Aleksanyan, Zh.I. Hakobyan, V.P. Hakobyan,
S.H. Movsesyan, L.L. Osipyan

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

• Փորձարարական և տեսական հոդվածներ •

Հովհաննիսյան Ռ.Լ., Ռուխկյան Մ.Յա. Հրազդան գետի ձկների հեղինակությունը և նրանց ֆաունայի ուսումնասիրությունը Երևան քաղաքի շրջակայքում.....	6
Ստեփանյան Լ.Գ., Կոբեյան Դ.Դ., Համբարյան Լ.Ռ., Ղուկասյան Է.Խ. Ախպարա ջրամբարի արդի էկոլոգիական վիճակի գնահատում.....	11
Թերլեմեզյան Դ.Լ., Չապանյան Ե.Ն., Սարգսյան Մ.Ա. Ոսկետուտի պտղաբերության հարսնյակների կշռի և թրթուրների քանակության փոփոխությունները զանգվածային բռնկման շրջանում.....	19
Հարությունյան Ա.Ա., Ղուկասյան Գ.Տ., Գրիգորյան Ա.Ս., Ստեփանյան Դ.Մ. Պիրիմիդինների, խինազոլինների և բիս-բինազոլինների նոր ածանցյալների հակամանրէային և ՄՄՕ-արգելակիչ հատկությունները.....	26
Մայրապետյան Ս.Խ., Ալեքսանյան Զ.Ս., Թադևոսյան Ա.Դ., Թովմասյան Ա.Դ., Անանիկյան Դ.Ս., Գասպարյան Թ.Ս. Օմեգա 3-ի պարունակությունը և հակա-ռադիկալային ակտիվությունը գանգուր կաղամբի (<i>Brassica Oleracea</i> Var. <i>Sabellica</i> L.) հիդրոպոնիկական մշակույթի պայմաններում.....	31
Պիպոյան Ս.Խ., Առաքելյան Ա.Ս. Արփա գետում (Հայաստան) կորեական սրափորիկի <i>Hemiculter leucisculus</i> (Basilevsky, 1855) (Cypriniformes, Cyprinidae) հայտնաբերման մասին.....	35
Հայրապետյան Ա.Ս. Հարավային Անդրկովկասի ֆլորայի Salsoloideae (Chenopodiaceae) ենթաընտանիքի որոշ ներկայացուցիչների ծաղկափոշու մորֆոլոգիան: I. <i>Seidlitzia</i> Bunge և <i>Noaea</i> Moq. ցեղեր.....	42
Մուրադյան Ա.Դ. Հայաստանի ֆլորայի <i>Gladiolus hajastanicus</i> Gabrielian (Iridaceae) էնդեմիկ տեսակի ծաղկափոշու մորֆոլոգիական առանձնահատկությունները.....	52
Մելքոնյան Ի.Ե., Հովհաննիսյան Ռ. Ս., Խաչատրյան Ն.Ս., Մարկոսյան Լ.Ս. Ինուլինից Կիտրոնաթթվի նոր արտադրիչի էկզոինուլինազայի առանձնահատկությունները.....	56
Կարապետյան Դ.Ս., Անիկյան Լ.Կ. Հակաօքսիդանտային ֆերմենտների ակտիվությունը ռենտգենյան ճառագայթների ազդեցությանը ենթարկված <i>C. guilliermondii</i> NP-4 խմորասնկերում	65

• Համառոտ հաղորդումներ •

ԵՊՀ կենսաբանական, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի Գիտության նվիրյալի անմահացած կյանքը	70
Վարդանյան Ս.Ա. Գիտությանը նվիրված կյանք	72

СОДЕРЖАНИЕ

•Экспериментальные и теоретические статьи•

<i>Оганесян Р.Л., Рухьян М.Я.</i> Исследование гельминтофауны рыб реки Раздан в окрестностях г. Еревана.....	6
<i>Степанян Л.Г., Кобелян Р.О., Гамбарян Л.Р., Гукасян Э.Х.</i> Современная оценка экологического состояния водохранилища Ахпара.....	11
<i>Терлемезян Г.Л., Чапанян Е.Н., Саркисян М.А.</i> Фазовые изменения плодовитости, весов куколок и численность гусениц златогузки при массовых размножений.....	19
<i>Арутюнян А.А., Гукасян Г.Т., Григорян А.С., Степанян Г.М.</i> Антибактериальные и MAO-ингибирующие свойства новых стирилпроизводных пиримидинов, хиназолинов и бисхиназолинов.....	26
<i>Майрапетян С.Х., Алексанян Дж.С., Тадевосян А.О., Товмасын А.О., Ананикян Г.С., Гаспарян Т.С.</i> Содержание омега-3 и антирадикальная активность кудрявой капусты (<i>Brassica Oleracea</i> Var. <i>Sabellica</i> L.) в условиях гидропоники.....	31
<i>Пипоян С.Х., Аракелян А.С.</i> Об обнаружении корейской востробрюшки <i>Hemiculter leucisculus</i> (Basilewsky, 1855) (Cypriniformes, Cyprinidae) в реке Арпа (Армения)	35
<i>Айрапетян А.М.</i> Морфология пыльцы некоторых представителей подсемейства Salsoloideae (Chenopodiaceae) флоры Южного Закавказья. I. Роды <i>Seidlitzia</i> Bunge И <i>Noaea</i> MOQ.....	42
<i>Мурадян А.Г.</i> К особенностям морфологии пыльцы эндемичного вид <i>Gladiolus Hajastanicus</i> <i>Gabrielian</i> (Iridaceae) флоры Армении.....	52
<i>Мелкумян И.Е., Оганнисян Р.С. Хачатурян Н.С., Маркосян Л.С.</i> Свойства экзоинулиназы, нового продуцента лимонной кислоты из инулина.....	56
<i>Карпетян А.М., Аникян Л.К.</i> Активность антиоксидантных ферментов в дрожжах <i>S. guilliermondii</i> NP-4 подвергнутых к рентгеновскому облучению.....	65

•Краткие сообщения•

<i>Кафедра биохимии, микробиологии и биотехнологии ЕГУ, Вечная жизнь, преданная науке.....</i>	70
<i>Варданян С.А.</i> Жизнь, посвященная науке	72

CONTENTS

•Experimental and theoretical articles•

<i>Hovhannisyan R.L., Rukhkyan M.Ya.</i> Study of fish helminth fauna of Hrazdan river around Yerevan, Armenia.....	6
<i>Stepanyan L.G., Kobelyan H.H., Hambaryan L.R., Ghukasyan E.Kh.</i> Assessment of the current ecological state of Akhpara reservoir.....	11
<i>Terlemezyan H.L., Chapanyan E.N., Sargsyan M.A.</i> Phase changes in the brown-tail moth fertility, nymph weight and caterpillars number in the mass outbreak season.....	19
<i>Harutyunyan A.A., Cukasyan G.T., Grigoryan A.S., Stepanyan H.M.</i> Antibacterial and MAO-inhibiting properties of new styryl derivatives of pyrimidines, quinazolines and Bis-quinazolines.....	26
<i>Mairapetyan S.Kh., Alexanyan J.S., Tadevosyan A.H., Tovmasyan A.H., Ananikyan H.S., Gasparyan T.S.</i> Content of omega 3 and anti-radical activity of kale (Brassica Oleracea Var. Sabellica L.) in hydroponics condition.....	31
<i>Pipoyan S.Kh., Arakelyan A.S.</i> Fiding of sharpbelly <i>Hemiculter Leucisculus</i> Basilewsky, 1855 (Cypriniformes, Cyprinidae) in the Arpa river (Armenia)	35
<i>Hayrapetyan A.M.</i> Pollen morphology of some representatives of the subfamily Salsoloideae Chenopodiaceae) in South Transcaucasia. I. Genera Seidlitzia Bunge and Noaea MOQ	42
<i>Muradyan A.H.</i> To the peculiarity of pollen morphology of the endemic species <i>Gladiolus Hajastanicus</i> <i>Gabrielian</i> (Iridaceae) of flora of Armenia.....	52
<i>Melkumyan I.E., Hovhannisyan R.S., Khachatryan N.S., Markosyan L.S.</i> Peculiarity of exoinulinase of a novel producer of citric acid from inulin.....	56
<i>Karapetyan H.M., Anikyan L.K.</i> Antioxidant enzymes activity in yeast <i>C. guilliermondii</i> NP-4 influencted to X-ray radiation.....	65

• Short communication •

<i>Chair of Biochemistry, microbiology and biotechnology of YSU</i> Immortal life of Dedicated to science.....	70
<i>Vardanyan S.A.</i> Life Devoted to Science	72



Биолог. журн. Армении, 2 (73), 2021

ИССЛЕДОВАНИЕ ГЕЛЬМИНТОФАУНЫ РЫБ РЕКИ РАЗДАН В ОКРЕСТНОСТЯХ Г. ЕРЕВАНА

Р.Л. ОГАНЕСЯН¹, М.Я. РУХКЯН

¹Институт зоологии Научного центра зоологии и гидроэкологии НАН РА,
ruhov37@rambler.ru

Исследовали гельминтофауну рыб реки Раздан в окрестностях г. Еревана. В результате обследования 94-х экз. 7-ми видов рыб по общепринятой методике было зарегистрировано 7 видов гельминтов. Они были локализованы в полости тела, кишечнике и хрусталиках глаз рыб. Общая инвазированность рыб гельминтами составила 35 %. Определены экстенсивность и интенсивность инвазии рыб. Дан краткий сравнительный анализ инвазированности рыб гельминтами в различные годы.

Гельминтофауна рыб – река Раздан – экстенсивность и интенсивность инвазии

Ուսումնասիրվել է Հրազդան գետի ձկների հելմինթոֆաունան Երևանի շրջակայքում: Հետազոտվել է 7 տեսակի ձկների 94 առանձնյակ մակարոնձաքանության մեջ ընդունված մեթոդներով: Ձկների հելմինթներով ընդհանուր վարակվածությունը կազմել է 35 %: Հետազոտության արդյունքում գրանցվել է հելմինթների 7 տեսակ: Դրանք տեղայնացված էին ձկների մարմնի խոռոչում, աղիներում և աչքի ոսպնյակում: Որոշվել են ձկների վարակվածության էքստենսիվությունը և ինտենսիվությունը: Տրված է ձկների տարբեր տարիների հելմինթներով վարակվածության հակիրճ համեմատական վերլուծություն:

Ձկների հելմինթոֆաունա – Հրազդան գետ – վարակվածության էքստենսիվություն և ինտենսիվություն

The fish helminth fauna of Hrazdan River around Yerevan was studied. 94 specimens of 7 fish species from Cyprinidae Fam. were examined using the generally accepted method of parasitological autopsies. 7 species of the helminths were registered. They were localized in the body cavity, in the intestine and in the lens of the eye of the fish. The overall invasiveness of the fish by helminths was 35%. The extensivity and intensity of invasion were determined. The comparative analysis of fish invasion by helminths in different years is given.

The fish helminth fauna – Hrazdan River – the extensivity and intensity of invasion

Река Раздан вытекает из оз. Севан – крупнейшего пресноводного водоема Кавказского региона, высокогорного олиготрофного озера на высоте 1900.53 м н. ур. м. Река является основной водной артерией Армении, протекая по территории четырех марзов, и имеет важное экономическое, сельскохозяйственное и рекреационное значение. В верховьях она течет на юг по горной долине, в среднем течении реки делает несколько крутых изгибов, а в низовьях протекает по Араратской равнине и впадает в р. Аракс.

Ихтиофауна р. Раздан в различных участках различна. В нижнем течении реки она представлена более чем 30-ю видами, в т. ч. серебряный карась, армянская быстрянка, куринский усач, севанская храмуля, куринская уклейка, верховка, армянская плотва, кавказский голавль, ангорский голец, чернобровка, бычок, гамбузия и др. Выше по течению видовой состав рыб резко сокращается: регистрируются лишь несколько видов – серебряный карась, севанская храмуля, армянская быстрянка, куринский усач, ангорский голец, иногда ручьевая форель [10].

За последние десятилетия р. Раздан претерпела значительные изменения, подвергаясь мощному антропогенному прессу: строительство гидроэлектростанций, водохранилищ, поступление в реку сточных вод, использование реки в оросительных целях и др. Ввиду усиления негативных факторов в данном регионе, исследование гельминтофауны рыб реки представляет научный и практический интерес.

Ихтиогельминтофауна р. Раздан мало изучена. Имеются единичные данные 1980-гг.: у карасей в хрусталиках глаз были обнаружены метацеркарии трематод *Diplostomum* sp. с высокой инвазивностью, в полости тела – плероцеркоиды цестоды *Ligula intestinalis*, в кишечнике – ботриоцефалы. У куринской храмули из Разданского водохранилища была обнаружена трематода *Allocreadium isoporum* [4].

В 2017-2018 гг. изучали видовой состав гельминтофауны рыб верхнего и среднего течений р. Раздан, выявлено 8 видов гельминтов. Общая инвазивность обследованных рыб гельминтами составляла 37%. Определены показатели экстенсивности инвазии (ЭИ) и интенсивности инвазии (ИИ) рыб видами гельминтов, их локализация, степень инвазивности рыб [7, 8].

Целью работы явилось выявление видового состава ихтиогельминтофауны р. Раздан в окрестностях Еревана.

Материал и методика. Материалом исследований послужили сборы гельминтов рыб из р. Раздан, протоков и каналов в окрестностях г. Еревана. По общепринятой методике полных паразитологических вскрытий [3] было обследовано 94 экз. рыб 7-ми видов из сем. Cyprinidae: серебряный карась (*Carassius auratus gibelio*) – 26 экз., севанская храмуля (*Carpoeta carpoeta sevangi*) – 18 экз., куринский усач (*Barbus lacerta cyri*) – 14 экз., армянская быстрянка (*Alburnoides bipunctatus armeniensis*) – 12 экз., верховка (*Leucaspis delineatus*) – 10 экз., куринская уклейка (*Alburnus filippii*) – 8 экз., армянская плотва (*Rutilus rutilus schelkovnikovi*) – 6 экз.

Сбор и камеральную обработку гельминтов проводили по общепринятой методике [1]. Определение видов гельминтов проводили по Определителю паразитов [9], определение видов трематод р. *Diplostomum* – по таблице Шигина [11] и Определителю паразитов [9]. Для количественной характеристики популяций гельминтов использовали общепринятые показатели экстенсивности инвазии (ЭИ) и интенсивности инвазии (ИИ).

Результаты и обсуждение. Общая инвазивность рыб гельминтами составляла 35 % (33 экз.) У обследованных рыб было зарегистрировано 7 видов гельминтов, относящихся к 3-м систематическим группам: Trematoda – *Diplostomum spathaceum* Rudolphi, 1819, *D. rutili* Razmashkin, 1969, *D. mergi* Dubois, 1932, *D. paraspachaceum* Shigin, 1965; Cestoda – *Ligula intestinalis* (L., 1758), *Bothriocephalus opsariichthydis* Yamaguti, 1934; Nematoda – *Rhabdochona macrostoma* Moravec et Mikailov, 1970. Они были локализованы в полости тела, кишечнике и хрусталиках глаз рыб. Определены ЭИ и ИИ рыб гельминтами. Результаты исследований приведены в табл. 1.

Как видно из табл. 1, в хрусталиках глаз рыб обнаружены метацеркарии трематод р. *Diplostomum*. У карася ЭИ составляла 34,6 %, ИИ – 2 экз., у храмули ЭИ = 38,8 %, ИИ – 2 экз., у усача – соответственно 14,3 %, 1 экз., у быстрянки – 16,7 %, 1 экз., у уклейки ЭИ = 25 %, ИИ – 1 экз., у верховки – 10 %, 1 экз.

В полости тела карася и храмули обнаружены плероцеркоиды ремнеца *Ligula intestinalis*. У карася ЭИ составляла 15,4 %, ИИ – 2-3 экз., у храмули – соответственно 16,7 % и 2 экз.

Таблица 1. Инвазированность обследованных рыб р. Раздан гельминтами

Класс, вид гельминта	Хозяин	Локализация	ЭИ, %	ИИ ср., экз.
<u>Trematoda</u>				
<i>Diplostomum spathaceum</i> , <i>D. rutili</i>	храмуля	хрусталик глаза	38,8	2
<i>D. paraspithaceum</i> , <i>D. mergi</i> , <i>D. rutili</i>	карась	«-»	34,6	2
<i>D. spathaceum</i>	усач	«-»	14,3	1
<i>D. rutili</i>	быстрянка	«-»	16,8	1
<i>D. spathaceum</i>	уклейка	«-»	25	1
<i>D. spathaceum</i>	верховка	«-»	10	1
<u>Cestoda</u>				
<i>Ligula intestinalis</i>	карась	полость тела	15,4	2-3
” ”	храмуля		16,7	2
<i>Bothriocephalus</i> <i>opsariichthydis</i>	храмуля	«-» кишечник	5,6	1
<u>Nematoda</u>				
<i>Rhabdochona macrostoma</i>	храмуля	кишечник	11,1	2

В кишечнике храмули обнаружена цестода *Bothriocephalus opsariichthydis*. ЭИ составляла 5,6 %, ИИ – 1 экз.

У храмули в кишечнике найдена нематода *Rhabdochona macrostoma*. ЭИ равна 11,1 %, ИИ – 2 экз. У плотвы гельминтов не обнаружено.

Все обнаруженные виды гельминтов являются биогельминтами. 5 видов гельминтов относятся к генералистам (кроме *Bothriocephalus opsariichthydis* и *Rhabdochona macrostoma*). 5 видов гельминтов являются аллогенными (метацеркарии р. *Diplostomum* и плероцеркоиды ремнеца *Ligula intestinalis*), 2 вида – автогенными (*Bothriocephalus opsariichthydis* и *Rhabdochona macrostoma*). Все обнаруженные виды – эндопаразиты.

Ботриоцефалы оказывают механическое, токсическое, трофическое и инокуляторное действие на организм больных рыб. При высокой интенсивности инвазии наблюдается частичная или полная закупорка кишечника цестодами и гибель молоди рыб.

Из гельминтов более распространены метацеркарии диплостом и плероцеркоиды лигул. Эти виды гельминтов являются наиболее инвазионными и наносят огромный вред жизненной форме рыб.




Рис. 1. Метацеркария р. *Diplostomum* в хрусталике глаза карася (ориг. фото)

Метацеркарии диплостом, паразитируя в хрусталиках глаз рыб, вызывают паразитическую катаракту, приводящую к слепоте и, как следствие, к гибели.

Плероцеркоиды (личинки) цестоды *Ligula intestinalis*, паразитирующие в полости тела рыб, имея крупные размеры, разрушают внутренние органы, что приводит к их атрофированию и бесплодию рыб. Они вызывают прободение брюшной полости, приводящее к гибели рыб.

Одной из составляющих кормовой базы рыб является бентос. В его состав входят беспозвоночные животные – промежуточные хозяева гельминтов, являющиеся источником заражения рыб при наличии в них инвазии.

По данным фаунистических исследований реки, при изучении распределения и сравнительном анализе состава зообентоса в Разданской гидросистеме в 1930-х гг. и в 2004-2006 гг., выявлены изменения его количественных и качественных показателей, в зависимости от характера биотопов и степени загрязненности. В частности, брюхоногие моллюски сем. *Lymnaeidae*, являющиеся промежуточными хозяевами диплостом, регистрировались как в те годы, так и в настоящее время, однако, их количественные показатели значительно уменьшились [6]. Этим объясняется явная тенденция к снижению степени инвазированности рыб метацеркариями диплостом, по сравнению с прошлыми годами.

Rhabdochona macrostoma – автогенный вид, размножающийся в водной среде. Промежуточными хозяевами этой нематоды являются реофильные личинки амфибиотических насекомых, в т.ч. личинки поденок рр. *Ephemerella*, *Heptagenia* и др. [13].

Необходимо отметить, что по данным фаунистических исследований, в р. Раздан (окрестности с. Атарбекян) обнаружено большое количество реофильных видов – поденок р. *Heptagenia* (Ephemeroptera) [12].

В связи с подъемом уровня воды в оз. Севан, из которого вытекает р. Раздан, в последние годы начался процесс восстановления бентофауны; видовое разнообразие бентоса претерпело положительные изменения, по сравнению с 1990-ми гг. Так, если в 1991 г. в составе макробентоса озера личинки поденок практически не встречались, то в 2005-2006 гг. было обнаружено 25 бентосных видов, в т.ч. и личинки поденок (Ephemeroptera) из рр. *Ephemerella*, *Heptagenia* и др. [2]. По характеру питания храмуля относится к детрито-фитофагам. Кормовая база носит смешанный характер (зоопланктон – зообентос) с преобладанием зоопланктона. Из бентосных организмов храмуля поедает больше всего личинок поденок и

хириноид [5]. Кроме того, продолжение повышения уровня воды оз. Севан привело к формированию различных биотопов и увеличению количественных показателей зообентоса в литорали озера, в районе затопленных участков, где, в частности, обнаружены и поденки из отряда (Ephemeroptera), являющихся промежуточными хозяевами нематод р. *Rhabdochona* [1]. Этими фактами объясняется обнаружение у храмули нематоды *Rhabdochona macrostoma*, которая ранее не была зарегистрирована.

Итак, при гельминтологическом обследовании рыб из р. Раздан было зарегистрировано 7 видов гельминтов. Общая инвазированность рыб гельминтами составляла 35 %.

Таким образом, наблюдается скудность видового состава гельминтофауны рыб реки, которая является результатом усиления воздействия негативных антропогенных факторов в данном регионе, приводящих к изменениям численности промежуточных хозяев гельминтов рыб, состава кормовой базы рыб и др.

ЛИТЕРАТУРА

1. Акопян С.А. Макрозообентос литоральной зоны и затопленных участков побережья озера Севан. Из коллективной монографии “Оз. Севан. Экологическое состояние в период изменения уровня воды”. с. 164-172, 2016.
2. Акопян С.А., Джэндереждян К.Г. Зообентос озера Севан. В кн.: Экология озера Севан в период повышения его уровня. Результаты исследований Российско-Армянской биологической экспедиции по гидроэкологическому обследованию озера Севан (Армения) (2005-2009 гг.). с. 206-214, 2010.
3. Быховская-Павловская И.Е. Паразиты рыб. Руководство по изучению. 121 с., 1985.
4. Вартанян Л. К. Паразитофауна рыб озера Севан и некоторых других водоемов и водотоков Армении. Автореф. канд. дисс., Ереван, 22 с., 1993.
5. Габриелян Б.К., Пивазян С.А., Смолей А.И. Питание храмули – *Varicorhinus sevangi* (Filippi) в изменившихся условиях озера Севан. Биолог. журн. Армении, 40, 10, 856-859, 1987.
6. Даллакян М.Р. Изменения донной фауны реки Раздан в условиях антропогенного воздействия. Автореф. канд. дисс., Ереван, 23 с., 2011.
7. Оганесян Р.Л., Рухкян М.Я. К гельминтофауне рыб верхнего течения реки Раздан. Матер. Межд. науч. конф. “Биоразнообразие паразитов”, посв. 75-летию Центра паразитологии и 140-летию со дня рожд. академика К.И. Скрябина. М., 23-25 октября 2018 г. Труды Центра паразитологии ИПЭЭ РАН. 50, с. 183-185, 2018.
8. Оганесян Р.Л., Рухкян М.Я. Исследование видового состава гельминтов рыб среднего течения реки Раздан, Армения. Матер. Межд. науч. конф. “Теория и практика борьбы с паразитарными болезнями”, вып. 20, М., 15-17 мая 2019, с. 433-437, 2019.
9. Определитель паразитов пресноводных рыб фауны СССР. 3. Паразитические многоклеточные (Вторая часть). Л., Наука, 583 с., 1987.
10. Пипоян С.Х. Ихтиофауна Армении. Этапы формирования и современное состояние. 538 с., 2012.
11. Шугин А.А. Трематоды фауны СССР. Род *Diplostomum*. Метациркулярии. М., Наука, 256 с., 1986.
12. Asatryan V.L., Dallakyan M.R. The changes of ecological status of the Hrazdan River under the impact of Aghbyurak Dam. Матер. Межд. науч. конф. “Закономерности формирования и воздействия морских, атмосферных опасных явлений и катастроф на прибрежную зону РФ в условиях глобальных климатических и промышленных вызовов”. Ростов-на-Дону, 13-23 июня 2019, с. 257-260, 2019.
13. Moravec F. Studies on the development of the nematodes *Rhabdochona* (Filichona). Folia parasitol., vol. 19, p. 231-333, 1972.

Поступила 05.03.2021



Հայաստանի կենսաբ. հանդես, 2 (73), 2021

ԱԽՊԱՐԱ ՋՐԱՄԲԱՐԻ ԱՐԴԻ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Լ.Գ. ՍՏԵՓԱՆՅԱՆ, Յ. Յ. ԿՈՐԵԼՅԱՆ, Լ.Ռ. ՀԱՄԲԱՐՅԱՆ, Ե. Խ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

ՀՀ ԳԱԱ կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնի
հիդրոէկոլոգիայի և ձկնաբանության ինստիտուտ
hripsimekobelyan@mail.ru

Ախպարա ջրամբարը կառուցվել է Հրազդան գետի վրա և Հայաստանի Հանրապետության կարևոր էներգետիկ ենթակառուցվածքներից է: Ստեղծվելով էներգետիկ նպատակների համար՝ ջրամբարի ջրի մակարդակն անընդհատ փոփոխվում է, ինչն ազդում է ջրամբարի ջրի որակի վրա՝ հանգեցնելով ներջրամբարային բազմաթիվ գործընթացների փոփոխության: Ջրամբարի էկոլոգիական վիճակի գնահատման համար կատարվել են ջրակենսաբանական և ջրաքիմիական ուսումնասիրություններ: Ըստ ջրակենսաբանական ցուցանիշների ջրամբարում օրգանական աղտոտվածության մակարդակն ուսումնասիրված սեզոններին եղել է β -մեզոսապրոբ:

*Ախպարա ջրամբար – կոլի ինդեքս – ֆիտոպլանկտոնային համակենցություն –
ջրաքիմիական ցուցանիշներ*

Водохранилище Ахпара было сконструировано на реке Раздан и является важным для энергетической инфраструктуры Республики Армения. В созданном для энергетических целей водохранилище постоянно меняется количество воды, что влияет на ее качество и вызывает изменения во внутриводоемных процессах. Для оценки современного экологического состояния водохранилища были проведены гидробиологические и гидрохимические исследования. Проведен сравнительный гидробиологический анализ качества воды с помощью индикаторных видов сообществ. В исследуемые сезоны уровень органического загрязнения водоема, по гидробиологическим показателям, соответствовал β -мезосапробному.

*Водохранилище Ахпара – коли индекс – фитопланктонное сообщество –
гидрохимические показатели*

Akhpara Reservoir was built on the Hrazdan River and is one of the most important energy infrastructures in Republic of Armenia. Constructed for energy purposes, the water level in the reservoir is permanently changing, which affects on the water quality of the reservoir, leading to many changes in the reservoir processes. Hydro biological and hydro chemical studies were carried out to assess the ecological condition of the reservoir. According to the hydro biological parameters, the level of organic pollution in the reservoir during the studied seasons was β mesosaprob.

Akhpara reservoir – coli index – phytoplankton community – hydro chemical parameters

Գետերի հոսքի կարգավորման, հալոցքաջրերն ու անձրևաջրերը ոռոգման նպատակով կուտակելու, էներգետիկ կարիքները հոգալու և միկրոկլիմայական պայմանները մեղմելու համար Հայաստանում կառուցվել է շուրջ 80 ջրամբար՝ 988 միլիոն մ³ ընդհանուր մակերեսով: Հրազդան գետի վրա (երկարությունը՝ 141 կմ) կառուցվել են երկու ջրամբարներ՝ Ախպարա և Երևանյան լիճ [2, 21]: Ախպարա ջրամբարը տեղակայված է Կոտայքի մարզում՝ Հրազդան քաղաքի տարածքում, սնվում է Հրազդան և Մարմարիկ գետերից: Այն Արգելի գլխամասային և Արգելի հեկ-ի կարգավորիչ ջրամբարն է: Ջրամբարը շահագործման է հանձնվել 1953 թ. [25] և բարերար ազդեցություն է թողնում մարզի միկրոկլիմայի ձևավորման վրա:

Էներգետիկ նպատակներով ջրամբարի ջրի օգտագործման արդյունքում վերջինիս մակարդակն անընդհատ տատանվում է, ինչը բացասաբար է անդրադառնում ջրամբարի ջրի որակի վրա և ակտիվացնում է ներջրամբարային բազմաթիվ գործընթացներ:

Աշխատանքի նպատակն է Ախպարա ջրամբարի արդի Էկոլոգիական վիճակի գնահատումը ջրակենսաբանական և ջրաքիմիական ցուցանիշների հիման վրա:

Նյութ և մեթոդ: 2020 թ. ամառ, աշուն ժամանակահատվածում կատարվել են Ախպարա ջրամբարի (մակերեսը՝ 1,7 կմ², ջրատարողությունը՝ 5,6 միլիոն մ³), [2] համալիր մանրէաբանական, ջրակենսաբանական (ալգոլոգիական) և ջրաքիմիական հետազոտություններ: Նմուշները վերցվել են ջրամբարի՝ ըստ աշխարհագրական դիրքի՝ 40°51'30" լայնության և 44°74'35" երկարության դիտակետի մակերևութային շերտից յուրաքանչյուր սեզոնին մեկական անգամ:

Մանրէաբանական հետազոտությունների համար նմուշառումը կատարվել է մանրէագերծ տարաներով, մանրէաբանության մեջ ընդունված մեթոդների համաձայն [13]: Մեզոֆիլ սապրոֆիտ մանրէների (37°C) թվաքանակը որոշվել է չոր սննդարար ագարից պատրաստված ստանդարտ սննդամիջավայրում, աճի մեկ օրվա հաշվարկով, իսկ կոլի-ինդեքսը՝ մեմբրանային ֆիլտրման մեթոդով [7, 8]:

Ալգոլոգիական հետազոտությունների համար փորձանմուշների նախնական մշակումը կատարվել է ժամանակակից ջրակենսաբանական մեթոդներով [3]: Ջրիմուռների տեսակային կազմի որոշումը կատարվել է մի շարք որոշիչների օգնությամբ [5, 11, 17, 22]: Ջրիմուռների օրգանական աղտոտվածության ինդիկատոր տեսակների բնութագիրը տրվել է ըստ Ս.Ս. Բարինովայի [4]: Սապրոբայնության գործակիցը որոշվել է ըստ Պանտե Բուկի բանաձևի [20]: Սապրոբայնության տիրույթներն ըստ ջրիմուռների սապրոբայնության գործակցի արժեքների տրված են աղ. 1-ում:

Ջրաքիմիական նմուշառումը կատարվել է ջրակենսաբանական նմուշառմանը զուգահեռ: Ջրի թթվահիմնային պոտենցիալը՝ pH-ը, որոշվել է Milwaukee Waterproof pH meter սարքի միջոցով դաշտային պայմաններում: Կենսածին տարրերի պարունակությունը ջրում որոշվել է ըստ միջազգային ընդունված ստանդարտների՝ սպեկտրոֆոտոմետրիկ եղանակներով [9]:

Աղյուսակ 1. Սապրոբայնության տիրույթն ըստ սապրոբայնության գործակցի արժեքի

Սապրոբայնության տիրույթ	Սապրոբայնության գործակից, S
Զսենոսապրոբ	0-0,5
Օլիգոսապրոբ	0,5-1,5
Մեզոսապրոբ	1,5-3,5
Պոլիսապրոբ	3,5-4,5

Ջրամբարի ջրի որակի Էկոլոգասանիտարական գնահատումը կատարվել է ըստ Վ.Դ. Ռոմանենկոյի [12] և ՀՀ կառավարության N 75-Ն որոշման [24]:

Աղյուսակ 2. Զրաքիմիական ցուցանիշների պարունակության որոշման մեթոդները, զգայնությունը և միջազգային ստանդարտները [23]


N	Պարամետրեր		Վերլուծության մեթոդիկա	Մեթոդի զգայնություն, գ/մ ³	Միջազգային ստանդարտ, ISO
1	2	3	4	5	6
1	NH ₄ ⁺	Ամոնիակ	Ֆոտոկլորիմետրիկ, Նեպերի ռեակտիվ	0.05	5664 6778
2	NO ₂ ⁻	Նիտրիտ	Ֆոտոկլորիմետրիկ, Գրիսի ռեակտիվ	0.01	6777
3	NO ₃ ⁻	Նիտրատ	Ֆոտոկլորիմետրիկ, Կադմիումի ամալգամ	0.1-0.5	7890-3
4	PO ₄ ³⁻	Ֆոսֆատ	Ֆոտոկլորիմետրիկ, Ամոնիումային մոլիբդենաթթու	0.01	6878

Աղյուսակներ և բնակարան: 2020թ. ուսումնասիրության ընթացքում Ախպարա ջրամբարում գրանցվել են ջրիմուռների 4 խմբերին՝ կապտականաչ (Cyanophyta), դիատոմային (Bacillariophyta), կանաչ (Chlorophyta), էվգլենային (Euglenophyta), պատկանող 31 տեսակներ: Տեսակային առավել մեծ բազմազանություն է գրանցվել դիատոմային և կանաչ ջրիմուռների խմբերում (աղ. 3):


Աղյուսակ 3. Զրամբարում ֆիտոպլանկտոնի տեսակային կազմը և սապրոբայնության գործակիցները [4]

		Ամառ	Աշուն	S
	Cyanophyta			
1.	<i>Aphanothece clathrata</i> West & G.S.West	+	+	β
2.	<i>Microcystis aeruginosa</i> Kützting	+	+	α-α
3.	<i>M. wesenbergii</i> Komárek in Joosen	+	+	α-α
	Bacillariophyta			
4.	<i>Amphora ovalis</i> (Kützting) Kützting	+	-	α- β
5.	<i>Cyclotella comta</i> Kützting	-	+	β-α
6.	<i>Cymbella ventricosa</i> C.Agardh	+	-	α-β
7.	<i>Cymatopleura eliptica</i> (Brébisson) W.Smith	-	+	β-α
8.	<i>Diatoma vulgare</i> Bory	-	+	-
9.	<i>Fragilaria crotonensis</i> Kitton	-	+	α- β
10.	<i>Gomphonema olivaceum</i> (Hornemann) Brébisson	-	+	β- α
11.	<i>G.constrictum</i> Ehrenberg in Kützting	+	-	α
12.	<i>Melosira granulata</i> (Ehrenberg) Ralfs	-	+	α- β
13.	<i>Navicula. cryptocephala</i> var. Veneta (Kutz.)	-	+	α-α
14.	<i>Pinnularia virdis</i> (Nitzsch.) Ehrb.	+	+	α-α
15.	<i>Stephanodiscus astraea</i> (Kützting) Grunow	+	-	β
16.	<i>S. hantzschii</i> Grunow in Cleve & Grunow	-	+	α- β
	Chlorophyta			
17.	<i>Ankistrodesmus falcatus</i> (Corda) Ralfs.	+	-	β
18.	<i>Ankistrodesmus angustus</i> C.Bernard	+	-	-
19.	<i>Characium sieboldii</i> A.Braun in Kützting	-	+	-
20.	<i>Chlorella vulgaris</i> Beyerinck	+	-	α
21.	<i>Cosmarium depressum</i> (Nägeli) P.Lundell	+	-	-
22.	<i>C. formosulum</i> Hoff	-	+	α- α
23.	<i>C. reticulatum</i> Lilitskaya	-	+	-
24.	<i>Gloeocystis ampla</i> (Kützting) Rabenhorst	-	+	β- α
25.	<i>Nephrocystium agardhianum</i> Nägeli	+	-	α
26.	<i>Oocystis solitaria</i> Witt.	+	-	β- α
27.	<i>Pandorua morum</i> Bory	+	-	β
28.	<i>Scenedesmus falcatus</i> Chod	-	+	-
29.	<i>Sphaerocystis Schroeteri</i> Chod	+	-	β- α
	Euglenophyta			
30.	<i>Trachelomonas hispida</i> (Perty) F.Stein	+	-	β
31.	<i>T. volvocina</i> (Ehrenberg) Ehrenberg	+	+	β

Ամռանը քանակապես գերակայել են կանաչ ջրիմուռները: Քանակական մեծ զարգացում է գրանցվել խոշոր զաղութային ջրիմուռ *Pandorina Morum Bory* տեսակի համար, որի թվաքանակը կազմել է ֆիտոպլանկտոնային համակեցության ընդհանուր թվաքանակի 48 %-ը, կենսազանգվածը՝ 91 %-ը: Թեև այս տեսակը ջրամբարում գրանցվել է նաև նախկին ուսումնասիրությունների ընթացքում, սակայն չի հանդիսացել գերակա տեսակ [21, 14]: *Pandorina Morum*-ը գրականությունից հայտնի է որպես թունավոր տեսակ, որի արտադրած նյութափոխանակության արգասիքներն ազդում են որոշ բակտերիաների և բարձրակարգ բույսերի վրա [19]:



Նկ. 1. 2020թ. Ախպարա ջրամբարում գրանցված ջրիմուռների թվաքանակի ցուցանիշները




Նկ. 2. 2020թ. Ախպարա ջրամբարում գրանցված ջրիմուռների կենսազանգվածի ցուցանիշները

Աշնանը ջրամբարում գրանցվել է սուկցեսիա՝ դոմինանտ խմբերի մակարդակով, գերակայել են դիատոմային ջրիմուռները, ինչը պայմանավորված էր *Cyclotella comta* Kutz տեսակի քանակական զարգացմամբ, վերջինս կազմել է ընդհանուր ֆիտոպլանկտոնային համակեցության 61 %-ը՝ ըստ թվաքանակի, և 43 %-ը՝ ըստ կենսազանգվածի: Կանաչները որակապես և քանակապես եղել են ենթադոմինանտ ջրամբարի ֆիտոպլանկտոնային համակեցությունում (աղ. 3, նկ.1, 2): Գետում արձանագրված տեսակներից օրգանական աղտոտվածության կենսաբացահայտիչ են 25 տեսակներ (համակեցության 81%-ը), (աղ. 3), [17]: Գերակայել են β մեզոսապրոբ տեսակները, որոնք կազմել են ընդհանուր համակեցության 42%-ը (աղ.3):

Սապրոբայնության գործակցի արժեքները ջրամբարում տատանվել են 1.6-1.8 տիրույթում, ինչը համապատասխանում է օրգանական աղտոտվածության β-մեզոսապրոբ մակարդակին:

2020թ. Ախպարա ջրամբարում իրականացված ուսումնասիրությունների ընթացքում սապրոֆիտ բակտերիաների թվաքանակը տատանվել է 560-2000 ԳԱՄ/մլ-ի սահմաններում: Ամռանը, չնայած ջրի բարձր ջերմաստիճանին (աղ. 4), գրանցվել է համեմատաբար ցածր թվաքանակ (560 ԳԱՄ/մլ): Ըստ Մ.Լ. Գրիգորիի կատարած հետազոտությունների՝ անոթ բակտերիաները զգայուն են *Pandorina morum* տեսակի արտադրած թույների հանդեպ, ինչն արգելակում է նրանց աճը [19]: Հետևաբար՝ ամռանը ջրամբարում բակտերիաների փոքր արժեքները կարող են պայմանավորված լինել *Pandorina morum* տեսակի քանակական զարգացմամբ: Աշնանը սապրոֆիտ բակտերիաների թվաքանակն աճել է (2000 ԳԱՄ/մլ): Կոլի-ինդեքսի արժեքները փոփոխվել են 2-3 հազ. ԳԱՄ/լ-ի սահմաններում: Ամռանը ջրի ծավալի նվազման արդյունքում գրանցվել է կոլի-ինդեքսի համեմատաբար բարձր արժեք, որը, սակայն, չի գերազանցել սահմանային կոնցենտրացիան (500 ԳԱՄ/100մլ), [6]:



Նկ. 3. 2020թ. Ախպարա ջրամբարում գրանցված սապրոֆիտ բակտերիաների (ԳԱՄ/մլ) և կոլի-ինդեքսի (ԳԱՄ/լ) արժեքները

Աղյուսակ 4. 2020թ. Ախպարա ջրամբարում ջերմաստիճանի և թթվահիմնային պոտենցիալի արժեքները

Ցուցանիշ	Ամառ	Աշուն
T°C	24	17
pH	8.8	8.8

Ինչպես նախորդ տարիներին, ըստ մանրէաբանական ցուցանիշների, ջրամբարում օրգանական աղտոտվածության մակարդակը հետազոտված ժամանակահատվածում եղել է β մեզոսապրոբ [1, 7, 15]:


Զրաքիմիական ուսումնասիրությունների արդյունքում գրանցվել է ջրամբարների համար բնորոշ թթվահիմնային միջավայր՝ 8.8 (աղ. 4), [16]:

Հայտնի է, որ գյուղատնտեսական և կոմունալ-կենցաղային հոսքաջրերի միջոցով ջրավազաններ են ներթափանցում մեծ քանակությամբ ազոտ և ֆոսֆոր պարունակող


միացություններ, որոնք խթանում են ջրիմուռների աճը՝ վատացնելով ջրի որակը [10]:

Կատարված հետազոտությունների ընթացքում Ախպարա ջրամբարում գրանցվել են ֆոսֆատների բարձր արժեքներ, որոնք ամռանը գերազանցել են մակերևութային ջրերի համար ընդունված էկոլոգիական նորմը մոտ երեք անգամ (Նկ. 7):


Հայտնի է, որ ազոտի հանքային ձևերը նպաստում են ֆիտոպլանկտոնի զարգացմանը: Ընդ որում կանաչ և կապտականաչ ջրիմուռները նախընտրում են ամոնիումը, իսկ դիատոմայիները՝ նիտրատները [18]:




Նկ. 4. 2020թ. Ախպարա ջրամբարում նիտրիտ իոնի կոնցենտրացիան: 1. Ամառ, 2. աշուն



Նկ. 5. 2020թ. Ախպարա ջրամբարում նիտրատ իոնի կոնցենտրացիան: 1. Ամառ, 2. աշուն



Նկ. 6. 2020թ. Ախպարա ջրամբարում ամոնիում իոնի կոնցենտրացիան: 1. Ամառ, 2. աշուն



Նկար 7. 2020թ. Ախպարա ջրամբարում ֆոսֆատ իոնի կոնցենտրացիան:
1. Ամառ, 2. աշուն

Ինչպես երևում է նկար 6-ից, ամռանը, երբ ջրամբարում բանակապես գերակայել են կանաչ ջրիմուռները, իսկ կապտականաչներն ըստ թվաքանակի եղել են ենթադրմանստ, գրանցվել է ամոնիումային ազոտի ցածր կոնցենտրացիա: Աշնանը ամոնիումային ազոտի պարունակությունը մեծացել է՝ գերազանցելով Էկոլոգիական Նորմերը (Նկ. 6): Նիտրիտների արժեքները աշնանը նույնպես ավելացել են (Նկ. 4):

Ուսումնասիրության ընթացքում գրանցվել են նիտրատների ցածր արժեքներ (Նկ. 5), (Էկոլոգիական Նորմի արժեքը՝ 2,5 մգ/լ), և նույնիսկ աշնանը, երբ ջրամբարում զգալիորեն ավելացել են ամոնիումային և նիտրիտային ազոտի արժեքները, նիտրատների բանակությունը շարունակել է մնալ ցածր, ինչն ամենայն հավանականությամբ պայմանավորված է դիատոմային ջրիմուռների բանակական զարգացմամբ:

Այսպիսով, 2020թ. կատարված ջրակենսաբանական հետազոտությունների արդյունքում ամռանը, երբ ջրամբարում գրանցվել է խոշոր գաղութային կանաչ ջրիմուռ *Pandorina Morum* տեսակի զարգացում, որի արտադրած թույների հանդեպ զգայուն են աերոբ բակտերիաները, արձանագրվել են սապրոֆիտ բակտերիաների ցածր բանակական ցուցանիշներ: Ջրամբարում գրանցվել են ազոտ պարունակող միացությունների ցածր, հանքային ֆոսֆորի բարձր կոնցենտրացիաներ:

Աշնանը գերակայել են դիատոմային ջրիմուռները, որին զուգահեռ ավելացել են սապրոֆիտ բակտերիաների ցուցանիշները: Կողի բակտերիաների արժեքների նշանակալի փոփոխություններ ջրամբարում չեն դիտվել: Ջրամբարում ջրիմուռների խմբում սուկցեսիոն փոփոխությունների հետ մեկտեղ ավելացել են նաև ամոնիումային և նիտրիտային ազոտի արժեքները, սակայն նվազել է նիտրատային ազոտը: Ֆոսֆատների կոնցենտրացիան աշնանը ևս գերազանցել է Էկոլոգիական Նորմի արժեքները:

Ըստ ջրակենսաբանական ցուցանիշների՝ ջրամբարում օրգանական աղտոտվածության մակարդակն ուսումնասիրված սեզոններին եղել է β մեզոսապրոբ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Կոբեյան Դ.Դ. Երևանյան լճի և Ախպարա ջրամբարի Էկոլոգասանիտարական վիճակի գնահատումը, Հայաստանի կենսաբ. հանդես, 70, 3, էջ 88-92, 2018:
2. Չիլիկարյան Լ.Ա., Մուսականյան Բ.Պ., Աղաբաբյան Կ.Ա., Թոթմաջյան Դ.Վ. Հայաստանի գետերի և լճերի ջրագրությունը, Եր., 49 էջ, 2002:

3. *Абакумов В.А.* Руководство по методам гидробиологического анализа поверхностных вод и донных отложений, Л., Гидрометиздат, с. 78-86, 1983.
4. *Барина С.С., Медведева Л.А., Анисимова О.В.* Биоразнообразие водорослей-индикаторов окружающей среды. Тель Авив: Pilies Studio, 498 с., 2006.
5. *Гамбарян Л., Шагазизян И.* Определитель родов водорослей пресноводных водоемов, Ереван, 60 с., 2014.
6. Гост Р 51592-2000. Общие требования к отбору проб. Введ. 2000-04-21. М., 35 с. 2008.
7. *Кобелян Р.О., Мкртчян Ж.Г., Габриелян Б.К.* Оценка эколого-санитарного состояния Ереванского озера и водохранилища Ахпара, Биолог. журн. Армении, 72, 1-2, стр. 126-131, 2020.
8. *Лабинская А.С.* Микробиология с техникой микробиологических исследований, стр. 303-314, 1978.
9. *Лурье Ю.* Унифицированные методы анализа воды, стр. 375, 1971.
10. *Никонов А.М.* Гидрохимия. Санкт-Петербург, Гидрометеоиздат, стр. 4442001.
11. *Процкина-Лавренко А.И., Макарова И.В.* Водоросли планктона Каспийского моря, Л., Наука, 205 с., 1986.
12. *Романенко В.Д., Окснюк О.П., Жуковский В.Н., Стольберг Ф.В., Лаврик В.И.* Экологическая оценка воздействия гидротехнического строительства на водные объекты, Киев, стр. 218-221, 1990.
13. *Рымовская М.В.* Основы промышленной асептики, Минск, стр. 13-18, 2018.
14. *Степанян Л.Г., Гамбарян Л.Р.* Оценка сходства основных показателей фитопланктонного сообщества разнотипных водных экосистем, Биолог. журн. Армении, 68, 4, стр. 6-12, 2016.
15. *Степанян Л.Г., Кобелян Р.О., Гамбарян Л.Р.* Изучение и оценка качества воды водохранилищ Ахпара и Ереванского озера по микробиологическим и фитопланктонным показателям. 20-я Международная Пушинская школа-конференция молодых ученых "Биология - наука XXI века" Пушкино, стр. 405-406, 2016.
16. *Хатчинсон Д.* Лимнология. М., "ПРОГРЕСС" 590 с. 1969.
17. *Царенко П.М.* Краткий определитель хлорококковых водорослей Украинской ССР, Киев, Наукова Думка, стр. 199, 1990.
18. *Domingues R., Barbosa A. B., Sommer U., Galvão H.M.* Ammonium, nitrate and phytoplankton interactions in a freshwater tidal estuarine zone: Potential effects of cultural eutrophication Aquatic Sciences, 73, 3, 331-343, 2011.
19. *Gregory M.L. Patterson & Denny O. Harris.* The effect of *Pandorina morum* (Chlorophyta) toxin on the growth of selected algae, bacteria and higher plants, Br. Phycol. J. 18: 259-266. (1983, published online 2007).
20. *Pantle F., Buck H.* Die biologische Überwachung der Gewässer und die Darstellung der Ergebnisse, Gas- und Wasserfach., 96, 18, 604p. 1955.
21. *Stepanyan L.G., Hambaryan L.R.* Development dynamics of phytoplankton community of Akhpara reservoir, Proceedings of the YSU Chemical and Biological Sciences, 30-33, 2016.
22. *Streble H., Krauter D.* Das Leben im Wassertropfen, Stuttgart, Kosmos, 2001, 415p.
23. <https://www.iso.org>
24. <https://www.arlis.am/documentview.aspx?docID=65705>
25. <https://hy.wikipedia.org/wiki/>

Ստացվել է 10.03.2021



Հայաստանի կենսաբ. հանդես, 2 (73), 2021

ՈՍԿԵՏՈՒՏԻ ՊՏՂԱԲԵՐՈՒԹՅԱՆ, ՀԱՐՍՆՅԱԿՆԵՐԻ ԿԵՌԻ ԵՎ ԹՐԹՈՒՐՆԵՐԻ ԶԱՆՎԱԿՈՒԹՅԱՆ ՓՈԼԱՅԻՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՉԱՆԳՎԱԾԱՅԻՆ ԲՈՆԿՄԱՆ ԵՐՋԱՆՈՒՄ

Հ.Լ. ԹԵՐԼԵՄԵՉՅԱՆ, Ե.Ն. ՉԱՊԱՆՅԱՆ, Մ.Ա. ՍԱՐԳՍՅԱՆ

Մանդակթերթի անվտանգության ոլորտի ռիսկերի գնահատման և
վերլուծության գիտական կենտրոն
elene.chapanyan@mail.ru

2012-2020թթ. հետազոտություններով հաստատված է, որ ոսկետուտի թրթուրների զանգ-
վածային բազմացման բոլորապտույտը տևում է 8 տարի և ընթանում է 4 փուլով:

Չանգվածային բռնկման երկրորդ փուլի երկրորդ տարում ոսկետուտի թրթուրների դեմ
պայքարը բացառում է վնասատուի կողմից հասցվելիք վնասն անտառին:

Հաստատված է, որ զանգվածային բռնկման I և II փուլերում արձանագրված հարսնյակների
և ձվակույտերի կշիռները ոսկետուտի թրթուրների դեմ պայքարի ահազանգող գործոններ են, իսկ
միավոր մակերեսի վրա ձմեռային գործող բների և դրանցում առկա թրթուրների քանակությամբ
հիմնավորվում է պայքարի միջոցառումների անհրաժեշտությունը:

Ոսկետուտ – հարսնյակներ – ձվակույտեր – թրթուրներ – ձմեռային գործող բներ

Исследованиями 2012-2020 гг. установлено, что цикл массовых размножений гусе-
ниц златогузки длится 8 лет и протекает 4-мя фазами. Защитные мероприятия, проводимые
во второй фазе второго года массовых вспышек, исключают вред, наносимый им лесу.

Установлено, что зафиксированный вес куколок и яйцекладок в I и II фазах мас-
совых размножений является сигнализирующим фактором защиты против гусениц злато-
гузки, а численность действующих зимних гнезд на единицу площади и количество гусениц
в них обосновывают необходимость защитных мероприятий.

Златогузка – куколки – яйцекладки – гусеницы – действующие зимние гнезда

Upon the investigations carried out in 2012-2020 it has been proved that the mass
propagation cycle of the caterpillars in the brown-tail moth lasts 8 years with 4 phases.

The struggle against the caterpillars of the brown-tail moth in the second year, upon the
second phase of its mass outbreak eliminates the damage caused by the mentioned pest to the
forests.

It has been confirmed that the weight of the nymphs and egg sacks recorded in the first and
second phase of the mass outbreak are alarming factors for taking struggling measures against the
caterpillars of the brown-tail moth. Thus, the need for the fighting measures is strongly grounded
by the amount of active winter webworms (loculus) on a surface unit and the number of
caterpillars found in them.

Brown-tail moth – nymphs – egg sacks – caterpillars – active winter webworms

Ոսկետուտը (*Euproctis chrysorrhoea* L.) պատկանում է թեփուկաթևերի կարգի (*Lepidoptera*) գեղամաթիթեռների ընտանիքին (*Lymantriidae*): Սաղարթի լուրջ վնասատու է: Հայաստանում հանդիպում է ամենուրեք, սակայն ամենից հաճախ չոր, լուսավոր անտառներում և այգիներում: Այգիներում հիմնականում վնասում է խնձորենուն, տանձենուն, շլորենուն, անտառներում՝ բոլորից շատ կաղնուն, համեմատաբար սակավ՝ բոխուն, ուռենուն, բարդուն, թեղուն, լորենուն, թխկենուն, ցիցխանենուն, կնձենուն, վարդագգի թփուտներից՝ մասրենուն և մամխուն [3, 7]: Տերևներով սնվելով՝ պտղատու և անտառային ծառատեսակներին վնասում են ոսկետուտի թրթուրները [2, 5, 10]: Վերջիններս, բազմաթանակ երևան գալով նշանակալից տարածության վրա, տերևագրկում են սաղարթները, կտրուկ նվազեցնում ծառերի արտադրողականությունը [1] ու հանգեցնում կերաբույս ծառատեսակների չորացման: Ուստի, վնասատուի ի հայտ գալը ժամանակին բացահայտելը հնարավորություն կընձեռի ֆիտոֆագի դեմ պայքարը կազմակերպելու այն ժամանակ, երբ նա մեծ քանակությամբ նշանակալից տարածքներ չի զբաղեցրել և ծառերին էական վնաս չի հասցրել:

Հատկանշական է, որ ոսկետուտի բազմացման սկզբնական փուլի բացահայտումն ապահովվում է վնասատուով բնակեցված տարածքի լավ կազմակերպված հսկողությամբ և առանձնյակների քանակության ճիշտ հաշվառմամբ: Նշված գործոններով հնարավոր է կանխատեսել նաև ֆիտոֆագի զանգվածային բազմացման միտումն անտառտեղամասում [8], երևան հանել օգտակար էնտոմոֆաունայի անկորուստ բազմացումն ու դրանց օգտակար գործունեությունը, տեսանելի դարձնել վնասակար միջատների դեմ պայքարի միջոցառումներում անհարկի սրսկումները՝ միաժամանակ խնայելով աշխատանքային և դրամական միջոցները [4]:

Ելնելով վերոնշյալից՝ նպատակ ենք հետապնդել հետազոտության արդյունքների հիման վրա ներկայացնել ոսկետուտի քանակության փոփոխության սխեմատիկ կորն ըստ տարիների և զանգվածային բռնկման փուլերի, երևան հանել վնասատուի առողջ էգ հարսնյակների կշռի և պտղաբերության (ծվակույտի կշիռ, ձվերի քանակ ծվակույտում) ցուցանիշների փոփոխություններն ըստ բռնկման փուլերի, ոսկետուտի ձմեռային բների կշռով և քանակությամբ կանխատեսել թրթուրների դեմ զարնանային սրսկման (ցողման) անհրաժեշտությունը:

Հետազոտության արդյունքները հնարավորություն կընձեռեն, հաշվի առնելով միջատասպան պատրաստուկների անվտանգությունը շրջակա միջավայրի համար, ոսկետուտի թրթուրների դեմ ցողումները կատարելու ժամանակին՝ ապահովելով կաղնուտ անտառների բնափայտի տարեկան աճը:

Նյութ և մեթոդ: Հետազոտության նյութ են հանդիսացել ոսկետուտի թրթուրները, հարսնյակները, հասունը, ծվակույտերը և դրանցում առկա ձվերը, ձմեռային գործող բներն ու կաղնի արևելյանը (*Quercus macranthera*): Հետազոտություններն իրականացվել են 2012-2020թթ. Արագածոտնի մարզի Թթուրչի համայնքին հարակից կաղնուտ անտառտեղամասում և լաբորատոր պայմաններում համաձայն ձեռնարկի [8]:

Ուշ աշնանային առաջին ցրտահարությունից հետո կատարվել է ոսկետուտի ձմեռային բների տեղադրական հսկողություն, որի ընթացքում երեքական ծառի վրա (երեքական կրկնողություն), հաշվի առնելով վնասատուի տնտեսական վնասակարության շեմը [9], հաշվվել և ստացված արդյունքների հիման վրա որոշվել է կաղնու ծառայում առկա ձմեռային բների սպառնալի քանակությունը: Անտառփորձատեղամասում ընտրված կաղնու նմուշային (մոդելային) ծառերը երիտասարդ էին, որոնց ճյուղերն այլ ծառերի ճյուղերի հետ չեն միակցվել:

Լաբորատոր պայմաններում մանր ճյուղերը ձմեռային բներից հեռացվելուց հետո բները կշռվել և կշռվածքը գրամներով ներկայացվել է որպես բնում առկա թրթուրների քանակության կողմնորոշիչ:


Ոսկետուտի զանգվածային բռնկման I-IV փուլերում, ըստ հետազոտության տարիների, կաղնու տերևների հակադիր կողմում տեղադրված ծվակույտերն առանձնացվել են, կշռվել, և հաշվարկվել է դրանցում առկա ձվերի քանակը: Զվակույտերը տերևներից առանձնացվել են նեղ շեղբիկ ունեցող դանակով:

Ըստ զանգվածային բռնկման փուլերի՝ կշռվել են նաև անտառտեղամասից լաբորատորիա տեղափոխված ֆիտոֆագի հարսնյակները:

Ավանդիտական եղանակով և երկփողյա մանրադիտակի օգնությամբ առողջների համեմատ որոշվել է ոսկետուտի ձվերի, թրթուրների և հարսնյակների վարակվածությունը մակաբույծներով [8]:

Չանգվածային բռնկման II փուլի գիտափորձերի որոշ ցուցանիշներ ենթարկվել են վիճակագրական վերլուծության [6]:

Արդյունքներ և քննարկում: 2012-2020թթ. հետազոտության արդյունքներից պարզվել է, որ ոսկետուտի թրթուրների զանգվածային բռնկման տևողությունը մեկ բույսի վրա 8 տարի է և ընթանում է 4 փուլով (գծապատկեր 1): Առաջինը՝ թրթուրների զանգվածային բռնկում առաջացնող (ծագող), երկրորդը՝ դրանց քանակությունը մեծացնող, երրորդը՝ զանգվածորեն բազմացած թրթուրների գործող, չորրորդը՝ զանգվածորեն բազմացած թրթուրների թվաքանակը մարողն է:



Գծապատկեր 1. Միևնույն բույսի վրա ոսկետուտի թրթուրների քանակության փոփոխության սխեմատիկ կորը զանգվածային բռնկման շրջանում (Թթուրի հարակից անտառատարածք (2012-2020թթ.):

Գծապատկեր 1-ում ներկայացված հետազոտության տարիները և սերունդների թվաքանակները զուգահեռաբար են: Այսպես, գծապատկերի սխեմատիկ կորից երևում է, որ զանգվածային բռնկման I փուլը տևում է 1 տարի, II, III և IV փուլերը՝ համապատասխանաբար 3, 2 և 2 տարի: Սերունդների քանակը I, II, III և IV փուլերում եղել է նույնքան՝ կազմելով համապատասխանաբար 1, 3, 2 և 2:

Գրական աղբյուրի համաձայն [8]՝ ոսկետուտի զանգվածային բռնկման I և II փուլերի ձևավորման համար կլիմայական պայմանները պետք է լինեն վնասատուի զարգացման համար բարենպաստ՝ տաք և չորային, որոնք հավանաբար տեղ են գտել նաև մեր հետազոտության տարիներին:

Թրթուրների քանակության բռնկման III (գործուն) փուլում մեծաքանակ թրթուրների սնման պրոցեսում տերևազրկվում են կաղնու ծառերը, և, ըստ գրական աղբյուրի [1], արգելակվում է բնափայտի տարեկան աճը:

Վ. Գաբրիելյանի և ուրիշների [1] մենագրության մեջ նշված է, որ 20 տարվա ընթացքում տերևակեր միջատների կողմից տարեկան տերևազրկվել է միջինը 25 հազ. հա անտառ, որի պատճառով բնափայտի տարեկան աճի միջին կորուստը կազմել է 17 հազ. մ³, առանձին դեպքերում մինչև 30 հազ. մ³:

Ոսկետուտի թրթուրների պատճառած վնասը նվազեցնելու կամ բացառելու նպատակով, ժամկետային առումով, որպես պայթարի այլընտրանքային ուղի մեր կողմից առաջարկվել է ֆիտոֆագի դեմ ինսեկտիցիդներով պայթարի միջոցառումներն իրականացնել թրթուրների ոչ թե զանգվածային բռնկման III փուլում (խտությունը՝ 30-35 թրթուր/մ² սաղարթում), այլ թրթուրների քանակության ավելացման՝ II փուլի երկրորդ տարում (միջին խտությունը՝ 15 թրթուր/մ² սաղարթում), (գծապատկեր 1): Վերջինիս ցուցանիշով ապահովված է վնասատուի տնտեսական վնասակարության շեմը (1 թրթուր/գծամետր ճյուղի վրա), [9]՝ միաժամանակ հաստատելով պայթարի միջոցառման անհրաժեշտությունը զանգվածային բռնկման II փուլում: Երկրորդ փուլում ֆիտոֆագի հասցրած վնասը նշանակալից չէ նաև այն առումով, որ պայթարի միջոցառումն առաջարկվում է իրականացնել ձմեռային բներից դուրս եկած և սաղարթ տեղափոխված ցածր (II-III) հասակի թրթուրների դեմ:

Գծապատկեր 1-ի սխեմատիկ կորի չորրորդ փուլում արձանագրվել է III փուլում ձևավորված մեծաքանակ թրթուրների թվաքանակի կտրուկ անկում, որը հիմնականում բացատրվում է թրթուրների սնման ընթացքում առաջացած կերաբույսի պակասով և մակաբույծ Էնտոմոֆագերի գործունեությամբ:

Ոսկետուտի որոշ առանձնյակներ կերաբույսի պակասի պատճառով և կերաբույս փնտրելու պատրվակով լքել են տերևագուրկ ծառը, իսկ մնացած թրթուրները հաղթահարել են սննդի պակասը և գոյատևել:

Լաբորատոր գիտափորձերի արդյունքներով հաստատված է, որ բռնկման IV փուլ թևակոխած ոսկետուտի թրթուրների 33-39%-ը վարակված են եղել մակաբույծ միջատներով: Վերջիններիս թրթուրները, սնվելով ոսկետուտի թրթուրների հյուսվածքներով, հարսնյակավորվել են ֆիտոֆագի թրթուրների մարմնից դուրս (նկ. 1):

Հարսնյակների և ձվերի մակաբուծվածությունը թրթուրների համեմատ եղել է խիստ սահմանափակ:

Մակաբույծ Էնտոմոֆագերի տեսակային կազմը ներկայումս գտնվում է որոշման փուլում:

Գիտափորձերում ներառված թրթուրները (նաև հարսնյակները) հիվանդության ախտանիշներ չեն ունեցել:

Գրական աղբյուրի համաձայն [8]՝ նույն բույսի վրա զանգվածային բռնկման փուլը 3 տարուց շուտ չի կրկնվում:

Աղ. 1-ում ներկայացված են ոսկետուտի առողջ Էգերի հարսնյակների կշռի և պտղաբերության փոփոխություններն ըստ զանգվածային բռնկման փուլերի: Պտղաբերությունը բնութագրվել է ձվակույտերի կշռով և դրանցում առկա ձվերի քանակով:



Նկ. 1. Մակաբույծ Էնտոմոֆագերի հարսնյակների տեսքը

Աղ. 1-ի տվյալներից երևում է, որ ոսկետուտի հարսնյակների, ձվակույտերի առավելագույն կշիռները և ձվակույտում առկա ձվերի առավելագույն քանակությունները դրսևորվել են ֆիտոֆագի զանգվածային բռնկման I և II միատեղված փուլերում՝ կազմելով համապատասխանաբար 0,31գ, 0,11գ և 605 հատ: Համեմատելով I և II փուլերի կրկնողություններում արձանագրված հարսնյակների կշիռների միջին ցուցանիշները III և IV փուլերի նույնանուն ցուցանիշների հետ, պարզվել է, որ I և II փուլ-

լերի գիտափորձերում արձանագրված հարսնյակների միջին կշիռները գերազանցել են III և IV փուլերի կրկնողությունների միջին ցուցանիշները՝ համապատասխանաբար 45,0-45,8 և 75,0-76,0 %-ով:

Աղյուսակ 1. Ոսկետուտի եգեր ձևավորող հարսնյակների կշռի և պտղաբերության ցուցանիշների փոփոխություններն ըստ փուլերի

Ցուցանիշներ	Տվյալներն ըստ փուլերի				
	I և II		III	IV	
	առավելագույն	միջին	միջին	միջին	նվազագույն
Հարսնյակի կշիռը, գ	0,31	0,20-0,24	0,11-0,13	0,048-0,060	0,03
ձվակույտի կշիռը, գ	0,11	0,05-0,07	0,02-0,03	0,007-0,009	0,003
Ձվերի բանակը ձվակույտում, հատ	605	368-411	161-209	55-70	19

III և IV փուլերում արձանագրված ձվակույտերի կշռի և ձվերի բանակությունների միջին ցուցանիշների նվազումը I և II փուլերի համեմատ տատանվել է համապատասխանաբար 40,0-57,1, 86,0-87,1 և 49,2-56,3, 83,0-85, 1%-ի սահմաններում: Հատկանշական է, որ առաջին և երկրորդ փուլերում տերևների վրա դրված ձվակույտերից առանձնացված ձվերը բռնկման երրորդ և չորրորդ փուլերում ներկայացված ձևավորված ձվերի համեմատ եղել են ակնադիտորեն խոշոր:

Աղ. 1-ում ներկայացված զանգվածային բռնկման I և II փուլերի ցուցանիշները կիրառելի են նաև ոսկետուտի դեմ պայքարի ահազանգման գործընթացում: Այսպես, նոր կշռված հարսնյակների և ձվակույտերի կշռային տվյալները եթե համապատասխանեն աղ. 1-ում ներկայացված I և II փուլերի միջին՝ համապատասխանաբար 0,20-0,24 և 0,05-0,07գ ցուցանիշներին, կամ արձանագրված նոր տվյալները լինեն նշված ցուցանիշների շրջակայքում, կարելի է հստակորեն պնդել, որ վնասատուն թրթուրների բանակության մեծացման (ավելացման) փուլում է և, ըստ այդմ, որպես ահազանգ, ոսկետուտի թրթուրների դեմ ծրագրել պայքարի միջոցառումների իրականացում:

